



ԹՄՄ Արշակ Տիգրանեան վարժարանի  
25-ամեակին առիթով



Պրն. Երուանդ Ակիշեան՝ 1948-ին Մելգոնեանէն շրջնաւարտ որպէս դաստիարակ՝ գովասանական “25 Տարիներ” յօդուածով երեւան կուգայ եւ կը նկարագրէ Տիգրանեան վարժարանի իրագործումները հայերէն լեզուով: Անկասկած, Տիգրանեան վարժարանի յաջողութիւնները գնահատելի են երբ մանաւանդ այդ կը պարտինք Մելգոնեանցի տնօրէնի սը անխոնջ աշխատանքներուն: Կը կարծէինք թէ «Պապանձումն Զաքարիայ»ի հոգին այցելած է Պրն. Ակիշեանին եւ ան այդ պատճառաւ մոռցած է Մելգոնեանի փառքն ալ երգել, Մելգոնեանէն սորված իր մայրենի լեզուով: Արդեօ՞ք ապերախտութեան հարց է թէ ոչ կը վախնայ որ ՀԲԸՄ-ի մարդիկը զինք դուրս կը շարտեն իրենց շրջանակէն: Նոյնիսկ, կաթիլ սը կեղծ արցունք չունի: Եթէ բոլոր Մելգոնեանցիները Պրն. Ակիշեանի օրինակին հետեւին այն ժամանակ, Մելգոնեան եղբայրները պիտի չկարենան ըսել այն ինչ որ ինք կը գրէ իր յօդուածին սկիզբը:

«Ի՞նչ մնաց, կեանքէն ինծի ի՞նչ մնաց,

Ինչ որ տուի ուրիշին, տարօրինակ, Այն սիայն ...»

Եւ կը փակէ իր յօդուածը:

«Փառք ու պատիւ հայ դպրոցի առաքելութեան հաւատակից ճանապարհորդներուն: Իսկ դուք Տիգրանեանցի հայ տղաներ ու աղջիկներ, վերանորոգ ձեր ուխտով, այս վեհ վայրկեանէն սկսեալ, մնացէք անխախտ շարունակողները լուսոյ այդ ճանապարհին:»

Սքանչելի՛ փափաք, սրտաբուխ մաղթանք, բայց ո՛չ Մելգոնեանի համար: Մելգոնեանի տուածը ու՞ր մնաց: Վա՛յ ինձ, վայ ինձ՝ Մելգոնեան, մեղքս ին՞չպէս քաւեմ, գլուխս կախ ես պիտի մեկնիմ այս աշխարհէն, եղած եմ հետեւորդ բայց ոչ առաջնորդ:

